ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հոկտեմբերի 2026թ. № 356-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0011-0059 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Լոռի Բերդ, բնակավայր Սայաթ-Նովայի փողոց, թիվ 8/1 հողամաս հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՊԱՊԻԿՅԱՆ**

Կ.տ

2026թ.հոկտեմբերի 22
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026թ. № 357-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-009-0043-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.09.2026Թ. ԹԻՎ 317-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով 31.08.2026թ. Արտակ Հայկազի Ջիլավյանի կողմից ներկայացված դիմումը, 31.05.2004թ.-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1723529 վկայականը, «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը և 29.09.2026թ. տրված չափագրման տվյալների մուտքագրման թիվ 20266BHGVU ծածկագիրը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

որոշում եմ.

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող Արտակ Հայկազի Ջիլավյանին սեփականության իրավունքով պատկանող 06-009-0043-0006 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.18771 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 21.34 քմ մակերեսով տնտեսական շինությունը (1-ին հարկ), 22.31 քմ մակերեսով ծածկը: Հողամասում առկա է 2024թ. ինքնակամ կառուցված 60.82 քմ մակերեսով պահեստ:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 21.34 քմ մակերեսով տնտեսական շինության համար՝ 13500 /տասներեք հազար հինգ հարյուր/

ՀՀ դրամ, 22.31 քմ մակերեսով ծածկի համար՝ 14100 /տասնչորս հազար հարյուր/ ՀՀ դրամ: Ընդամենը ենթակա է վճարման 27600 /քսանյոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

3. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարել համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 08.09.2026թ. թիվ 317-Ա որոշումը

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՎԱՀՐԱՄ ՊԱՊԻԿՅԱՆ**

Կ.Տ

2026թ. հոկտեմբերի 23
գ.Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2026թ. թիվ 358-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ ՅԱՂԴԱՆ ԳՅՈՒՂԻ 06-079-0010-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.17 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 236-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով Մանյա Իսրաելի Ազարյանի լիազոր անձ Արտակ Սամվելի Գևորգյանի ներկայացված դիմումը, Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 23.10.2026թ. թիվ 356 -Ա որոշումը, 23.09.2026թ Կադաստրի կողմից տրամադրված Կ-23092026-06-0262 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, «Սամվել Կամսարի Ֆրանգյանի» ԱՁ -ի կողմից կազմված 07.10.2026թ. թիվ 2026KCYC5S ծածկագրով հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը և տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի 06-079-0010-0003 կադաստրային ծածկագրում գտնվող 0.17 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի 06-079-0010-0003 ծածկագրով հողամասի մակերեսը 0.17 հա;

բ/ Հաստատել հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «Սամվել Կամսարի Ֆրանգյանի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.17 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Մանյա Իսրաելի Ազարյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի 06-079-0010-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.17 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 52,99 քմ մակերեսով անավարտ բնակելի տան նկատմամբ, համաձայն հավելվածի, ճանաչել Մանյա Իսրաելի Ազարյանի սեփականության իրավունքը:

4. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 10.07.2026. թիվ 236-Ա որոշումը::

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՊԱՊԻԿՅԱՆ**

Կ.Տ.

2026թ. հոկտեմբերի 23
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբերի 2026թ. № 359-Ա

2026Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ, ԳՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11.08.2026Թ. ԹԻՎ 270-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Արտաշես Սամվելի Աբգարյանի կողմից ներկայացված դիմումը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի և Արտաշես Սամվելի Աբգարյանի միջև 2026 թվականի հոկտեմբերի 21-ին կնքված՝ թիվ 4264 գրանցամատյանով նոտարական կարգով վավերացված պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի և Արտաշես Սամվելի Աբգարյանի միջև 2026 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ թիվ 3200 համարով հողամասի առուվաճառքի պայմանագիրը երկկողմանի լուծել:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մ. Հովսեփյանին գնորդի՝ Արտաշես Սամվելի Աբգարյանի կողմից վճարված հողամասի վաճառքի գինը՝ 7.600.000 (յոթ միլիոն վեց հարյուր հազար) և չափագրման, վկայականի ձեռքբերման, գույքի գնահատման և միասնական տեղեկանքի համար համայնքի կողմից իրականացրած ծախսերի փոխհատուցումը՝ 94.600 (իննսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարները վերադարձնել գնորդի՝ Արտաշես Սամվելի Աբգարյանի 2470064243340000 հաշվեհամարին՝ օրենքով սահմանված կարգով:
3. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 11.08.2026թ.-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-079-0117-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 270-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՊԱՊԻԿՅԱՆ**

Կ.Տ.

2026թ. հոկտեմբերի 23
գ. Լոռի Բերդ